ՁԵ N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 128

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և/կամ գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային գործառնական նշանակությունը
08-001-0213-0029 կադաստրային ծածկագրով 1.0 հա և 08-001-0213-0035 կադաստրային ծածկագրով 1.582188 հա մակերեսներով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների /համաձայն Գյումրի քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի՝ ընդհանուր օգտագործման կանաչ գոտի/ հողեր	08-001-0213-0029 կադաստրային ծածկագրով 1.0 հա և 08-001-0213-0035 կադաստրային ծածկագրով 1.582188 հա մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման գործառույթներն իրականացնել ապահովելով հողամասում առկա «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերությանը պատկանող օպտիկամանրաթելային մալուխների հետագա անխոչընդոտ շահագործումը:

4. ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Գյումրի քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «24» « հունիսի » 2022թ.